

Սուչովա՝ 43 տուն (215 հոգի), Կուրահոմօր՝ 15 հայ տուն, Չերնովից՝ 59 տուն, Եաշ՝ 42 հայ տուն, Ռատաուց՝ 6 տուն, Սովլա՝ 5 տուն, Իլիշեշտ՝ 3 տուն, Եաքօպէշթ՝ 2 տուն, Լիտենի՝ 2 տուն, Տօրնա-Վաթրա՝ 2 տուն, Մալիտինից՝ 1 տուն, Պունէշթ՝ 1 տուն, Շքէա՝ 1 տուն:

Քսաներորդ դարու առաջին քառորդին մէջ ալ 18,000 հոգիէն աւելի չէին ուսմանահայերը, որուն 10,000-ը Մոլտովայի ու Մուլթէնիոյ մէջ, եւ մնացածին՝ 5000-ը Թրանսիլվանիոյ, 2500-ը Պեսարապիոյ եւ 500-ը Պուքովինայի մէջ:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԹԻՒԼ

Ռումանահայութեան ներկայ մարդահամարը ընկել բոլոր փորձերը ձախողեցան դրեթէ: Ու շատ բնական էր:

Նախ որ Ռումանիոյ ներկայ սահմաններուն մէջ ապրող հայերը կը պատկանին երկու տարբեր դաւանանքի՝ Լուսաւորչական եւ կաթոլիկ: Այնպէս որ կարելի չէր, թեմական իշխանութեանց համար, ընդհանուր վիճակագրութեան մը մէջ համախմբել զանոնք:

Նոյնիսկ հնարաւոր չեղաւ հայ Լուսաւորչական համայնքները պատրաստել: Որովհետեւ կարելի չէր հիմ բռնել եկեղեցիներու տոմարներուն մէջ արձանագրուածները. շատ շատերը արձանագրութիւն չունին հոն: Ասկէ զատ հայութեան հոծ թիւ մը ցրուած է բազմաթիւ քաղաքներու մէջ՝ ուր հայ եկեղեցիներ չկան:

Կարելի չէր նաեւ հայկ. հիւպատոսարանի կամ Ռումանիոյ Հայկ. Միութեան տոմարները հիմ ունենալ, որովհետեւ հոն ալ նշանակուած էին միայն դադթական հայերը: Իսկ ստուար է թիւը ուսմանահայատակ հայոց եւ անոնց որոնք որեւէ օտար պետութեան քաղաքացի են:

Ու կար աւելի մեծ դժուարութիւն մը: Շատ շատերը իրենք զիրենք կը ծածկեն: Ռմանք կորանցուցած իրենց հետքը, եւ ուրիշներ ապաստանած՝ խեղաթիւրուած անուններու ետին, կը ծածկեն իրենց ծագումը, ոմանք ամֆնալով, ոմանք իրենց շահուն չհաշտեցնելով իրենց բուն ծագումը, եւ ուրիշներ ալ արդէն այլասերած լմնցած: Ու ասոնց մէջ շատ ուր կ'են նորեկները, աւա՛ղ, անոնք որ դեռ նոր եկան ապաստանիլ հոս:

Ռումէն Դաւանութեանց նախարարութիւնը, 1928 Մայիս 2-ին, չըջարեալանով մը բոլոր դաւանանքներէն վիճակագրական թիւեր ուղեր էր: Ռումանահայ թեմական իշխանութիւնը՝ կարենալ ճշգրիտ պատասխաններ տալու համար՝ իր կարգին չըջարեալան մը ուղղեց թեմին բոլոր թաղականութեանց:

Ստորեւ այդ առթիւ ստացուած թիւերն ալ կուտամ, յիշեցնելով միեւնոյն ատեն որ անոնք կը ներկայացնեն միայն Լուսաւորչական համայնքները, եւ ասոնցմէ ալ անոնք որոնք եկեղեցի ունին: Ահա թէ Ռումանիոյ 24 հայ եկեղեցիները որքան ծուխ կը ներկայացնեն այս պահուսնս:—

Պուֆթէշ.— 7000 հոգի:

Քօսթանցա.— 3800 հոգի:

Կալաց.— 1000 հոգի:

Սիլիսթրէ.— 600 հոգի:

Պապարմբ.— 900 հոգի:

Պրայլա.— 600 հոգի:

Թուլչա.— 100 հոգի:

Սուլինա.— 100 հոգի:

Պապատալ.— 69 հոգի:

Իամայիլ.— 75 հոգի:

Չէքաքէ-Ալպա.— 440 հոգի:

Հընչէշթ.— 76 հոգի:

Քիշնէվ.— 1000 հոգի:

Պըլց.— 150 հոգի:

Թրիօ-Օֆնա.— 124 հոգի:

Եաշ.— 200 հոգի:

Պօքօշան.— 350 հոգի:

Սուչովա.— 290 հոգի:

Ռուման.— 200 հոգի:

Պաֆով.— 350 հոգի:

Կուրախուօր.— 100 հոգի:

Փօֆշան.— 525 հոգի:

Օրիէյ.— 100 հոգի:

Փիքէշթ.— 57 հոգի:

Պէտք է նկատի ունենալ որ այս 17,206 հոգին հայ Լուսաւորչական եկեղեցիներու անմիջական ծուխերն են: Այս թիւէն դուրս կը մնան ուրիշ շատ մը քաղաքներ, ուր թէեւ հայեր կան, բայց եկեղեցի չունին:

ԻՄ ԹԻՒՆԵՐՍ

Կը փորձուիմ ես ալ վիճակագրութիւն մը կազմել: Նկատի ունիմ բոլոր այս թիւերը, Ռումանիոյ Հայկ. Միութեան տոմարները, եւ